AZG NEW PDF.qxd 14/07/2010 22:46 Page 1

Ազգ
Azg

15 ՅՈՒԼԻՍ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 131 (4511)

ISSN: 1829-1651

## Իլհամ Ալիեւը պնդում է, Շավարշ Քոչարյանը՝ նույնպես

Երեկ Ադրբեջանի կառավարության հերթական նիստում Իլհամ Ալիեւը միեւնույն ելույթում մի քանի անգամ նշեց. «ԼՂ հակամարտությունը լուծվելու է բացառապես Ադրբեջանի եւ նրա ժողովրդի ցանկությամբ», «Առանց Ադրբեջանի համաձայնության՝ որեւէ կարգավիճակ չի կարող տրվել Ղարաբաղին, իսկ այն ինչ պնդում են հայերը՝ միայն նրանց երազներն են: Հենց սա է բանակցությունների հիմքը»: Կրտսեր Ալիեւը իհարկե չի մոռացել ամեն անգամ կրկնելուց հավելել. «Ադրբեջանն ունի հզոր բանակ, որի հզոր լինելը ուժեղացնում է մեր դիրքերը բանակցություններում. Ադրբեջանի ժողովուրդը պետք է ամեն րոպե պատրաստ լինի՝ վերադարձնելու իր հողերը»: Ալիեւ կրտսերը նույնիսկ այն աստիճան է տարվել իր խոսքերի «գեղեցկությամբ», որ ավելացրել է. «Մեր դիրքորոշումը՝ ժողովրդավարական դիրքորոշում է»: Թե ինչպե՞ս կարող է ժողովրդավարական համարվել անդադար ռազմական ճանապարհ մատնանշող, ազգերի ինքնորոշման իրավունքը «երազ» որակող երկրի դիրքորոշումը, թողնենք հարեւանների ու «Հայաստանի բարեկամների» որոշմանը: Իսկ Հայաստանի փոխարտգործնախարար **Շավարշ Քոչարյանը**, պատասխանելով հարեւան երկրի նախագահին, մասնավորապես նշել է. «Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հայտարարությունները՝ Ադրբեջանի կառավարության նիստում ունեցած ելույթի ժամանակ, խափանում են ղարաբաղյան կարգավորման բանակցությունների հնարավոր առաջընթացը: Տարօրինակ կլիներ, եթե Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների՝ Ալմաթիում հնարավոր հանդիպումից առաջ պարոն Ալիեւը, խախտելով ավանդույթը, հանդես չգար հերթական հայտարարություններով՝ ուղղված ղարաբաղյան խնդրի կարգավորման հնարավոր առաջընթացի վիժեցմանը: Նոր չեն Ադրբեջանի իզուր փորձերը՝ սուտ ճոճելով խլացնելու իր կողմից միջազգային իրավունքի անդադար այլասերումը, պատմության լիակատար խեղաթյուրումը, սեփական աշխարհագրության անզուսպ ընդլայնումը: Սակայն, երբ ժառանգաբար իշխանություն ստացած այդ իշխանության անփոփոխելիությունը սահմանադրորեն ապահոված նախագահը պնդում է, որ ադրբեջանական պետությունը կառուցված է Եվրոպայի ամենաառաջատար փորձի վրա, ապա ցանկացած մեկնաբանություն ավելորդ է»:

Հ. ԱՓՅԱՆ

## Ադրբեջանը պատրա՞ստ է շարունակելու բանակցությունները մադրիդյան փաստաթղթի պետերբուրգյան վերջին տարբերակի հիման վրա

### *Հայաստանն ու Լեհաստանը կպարզեցնեն վիզային ռեժիմը*

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ալմաթիում հուլիսի 17-ին ԵԱՀԿ ԱԳ նախարարների ոչ պաշտոնական գագաթաժողովի շրջանակներում Հայաստանի եւ Ադրբեջանի, ինչպես նաեւ Մինսկի խմբի համանախագահող երկրների արտգործնախարարությունների ներկայացուցիչների հնգակողմ հանդիպումը հնարավոր է, բայց վերջնական դեռեւս հաստատված չէ, թեեւ, այդուհանդերձ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները աշխատում են հանդիպումը կազմակերպելու ուղղությամբ: Երեւանում Լեհաստանի ԱԳ նախարար **Ռադոսլավ Սիկորսկու** հետ համատեղ մամլո ասուլիսում, ի տարբերություն ադրբեջանական կողմի՝ արդեն իսկ այդ հանդիպման առնչությամբ ներկայացրած համաձայնության, երեկ հայտարարեց Հայաստանի ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանը**:



«Եթե այդ հանդիպումը կայանա, ապա գլխավոր խնդիրն է լինելու պարզել, թե արդյոք Ադրբեջանը պատրա՞ստ է շարունակելու բանակցությունները Սանկտ Պետերբուրգում ներկայացված մադրիդյան փաստաթղթի վերջին տարբերակի հիման վրա, ինչի մասին պայմանավորվածություն էր ձեռք բերվել ամենաբարձր մակարդակով հենց Սանկտ Պետերբուրգում», նշեց Նալբանդյանը:

Հարցին, թե արդյոք Ալմաթիում քննարկվելո՞ւ է որոշակի տարածքների վերադարձման ժամկետների հարցը, ինչպիսի հայտարարություն օրերս արել էր Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը, Էդվարդ Նալբանդյանն արձագանքեց միայն հիշեցմամբ, որ Ադրբեջանի երեւակայություններին արդեն իսկ պատասխանել է Հայաստանի փոխարտգործնախարար Շավարշ Քոչարյանը:

«**Ազգը**» դեռեւս հուլիսի 8-ի համարում տեղեկացրել էր, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 64-րդ նստաշրջանում Ադրբեջանի առնչությամբ նոր նախագիծ է ներկայացվել: «Միջազգային մարդասիրական իրավունքի եւ մարդու միջազգային իրավունքների պահպանումը Ադրբեջանի օկուպացված տարածքներում» վերտառությամբ փաստաթուղթը բաղկացած է տասը կետից:

Ըստ ՄԱԿ-ի կայքէջի, բանաձեւի նախագիծը նշում է. «Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում եւ դրան հարակից՝ հակամարտության ազդեցությունը կրած տարածքներից արտաքսված բնակչության վերադարձի», այդ տարածքներում «մշակութային ժառանգության պաշտպանության» եւ այլ հարցերի կարեւորության մասին: Նախագծում պահանջ է ներկայացվում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին՝ բանաձեւի ընդունման դեպքում պատրաստել զեկույց փաստաթղթի կիրառման մասին:

*Տես էջ 3*

## «Մեզ քանդելն էդքան հեշտ չի»

Մամուլի այն լուրերը, թե իշխանության վերին մակարդակում որոշել են նվազեցնել ԲՀԿ-ի դերը տարբեր մեթոդներով, անգամ ի վերջո արգելափակելով նրա մուտքը խորհրդարան՝ մեկնաբանեցին ե՛ւ **Արամ Սաֆարյանը**, ե՛ւ **Գալուստ Սահակյանը**: **Ա. Սաֆարյան**. «Չեմ հավատում, որ այդպիսի բան կարող է տեղի ունենալ, մեր կուսակցությունը շատ ազդեցիկ եւ հեղինակավոր է, մենք ունենք շատ անդամներ: Մենք սիրո, հարգանքի եւ բարեկամության վրա հիմնված թիմում ենք, եւ ես չեմ կարծում, որ մեզ քանդելն էդքան հեշտ ա»:

**Գալուստ Սահակյան**. «Նման խնդիր չի կարող լինել՝ «Բարգավաճ Հայաստանը» մեր կոալիցիոն գործընկերն է, համարվում է մեր երկրի երկրորդ ուժեղ քաղաքական ուժը: Առավելեւս պիտի ասեմ, որ մենք ակնկալում ենք կամ ավելի շուտ կանխատեսում ենք առաջիկա խորհրդարանական ընտրություններին կուսակցությունների մի շրջանակ, որոնք պիտի լինեն խորհրդարանում եւ կլինեն»:

Կոնկրետացնելու առաջարկին ի պատասխան ասաց, որ ժամանակից շուտ չեն ուզում մտնել ընտրական դաշտ, բայց եւ ավելացրեց՝ այն թիմերը, որոնք այսօր խորհրդարանում են, միայն առավել կազմակերպված ընդդիմություն կուզեր տեսնել այնտեղ:

Մ. Խ.

## Գ. Սահակյան. «ՀՀՇ-ն բավական լուրջ գործիչներ ունի»

Թերթերից մեկը գրել էր, որ ՀՀՇ-ի՝ հրաժարական տված ղեկավարներ Արարատ Զուրաբյանն ու Խաչատուր Քոքոբելյանը բանակցել են իշխանությունների հետ՝ արտահերթ ընտրություններում ՀՀՇ-ին խորհրդարանում տեղեր տալու վերաբերյալ: Այս իմաստով հետաքրքրական էր Գ. Սահակյանի գնահատականը, որ մեր խնդրանքով նա տվեց ՀՀՇ-ին եւ ՀԱԿ-ին. «ՀԱԿ-ը կուսակցություն չէ, խառնաշփոթ միավորում է, որտեղ տարբեր գաղափարներ կան, իսկ ընտրությունների տարբեր գաղափարներով մասնակցելը շատ վտանգավոր է: Ես կարծում եմ՝ եթե ՀՀՇ-ն ցուցակ ներկայացնի՝ խորհրդարանում տեղեր կունենա: ՀՀՇ-ն, բայց ոչ՝ ՀԱԿ-ը»: «ՀՀՇ-ի թիկունքում ուժ չկա, կան լիդերներ միայն, հիշեցնենք». «Դա այն քաղաքական ուժն է, որ բավական լուրջ քաղաքական գործիչներ ունի: Իսկ քաղաքական գործիչների տեսակետները կարող ես չընդունել, բայց քաղաքական գործիչներն են ընտրություններն ուղղորդում եւ հաջողության հասցնում»:

Մ. Խ.

## Ֆրանսիայի հասարակական վայրերում դեմք ծածկելն արգելվեց

**Ֆրանսիայի Ազգային ժողովը ընդունել է օրինագիծ, որը կանանց արգելում է հասարակական վայրերում երեւալ դեմքը լրիվ ծածկող հագուստով: Նախագահ Սարկոզիի առաջարկած օրինագծի օգտին քվեարկել են 577 պատգամավորներից 335-ը, դեմ է քվեարկել 1-ը, մյուսները ձեռնպահ են մնացել, հաղորդում է Ֆրանսպրեսը: Ձեռնպահ մնացել է ընդդիմությունը (սոցիալիստներ, կոմունիստներ):**



**Այժմ օրինագիծը պետք է ուղարկվի խորհրդարանի վերին պալատ՝ Սենատ: Սպասվում է, որ փաստաթուղթը այնտեղ եւս կընդունվի: Մի շարք փորձագետներ, սակայն, կարծում են, որ փաստաթուղթը կարող է մերժվել Սահմանադրական խորհրդում՝ Ֆրանսիայի գերագույն դատական մարմնում, ուր մուտք է գործում խորհրդարանում ընդունված յուրաքանչյուր օրինագիծ: 65,5 միլիոնանոց Ֆրանսիայում մահմեդականների թիվը մոտ 5-6 միլիոն է:**

**Ապրիլի վերջերին Բելգիայի խորհրդարանի ստորին պալատը նույնպես ընդունել էր օրինագիծ, որն արգելում է դեմքը ծածկող հագուստ կրելը:**

***Ո՞ՒՄ ՆՅԱՐԴԵՐՆ ԵՆ ԱՄՈՒՐ***

## Մրցավազք՝ դիմացինին ստիպելու Մադրիդյան սկզբունքներին առաջինը «ոչ» ասել

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ լրագրողներին հանդիպած **Արամ Սաֆարյանը** (ԲՀԿ), **Արտակ Դավթյանը** (ՀՀԿ) եւ **Խաչիկ Հարությունյանը** (ՕԵԿ), ովքեր մասնակցել էին հուլիսի 6-ից 10-ը Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում ԵԱՀԿ ԽՎ ամառային նստաշրջանին, ամփոփեցին այդ մասնակցությունը՝ Վեհաժողովի երեք կոմիտեներում իրենց աշխատանքն արդյունավետ գնահատելով, մանավանդ ադրբեջանցիների մշտական «նաղլը»՝ 20 տոկոս «գրավյալ» տարածքների մասին տարբեր բանաձեւերում առաջարկների տեսքով ներկայացված լինելու, մեր պատվիրակների հակահարվածների արդյունքում ձախողվել են:

**Սակայն մենք առավել ծանրանանք Ղարաբաղյան բանակցությունների վերաբերյալ ԲՀԿ խորհրդարանական խմբակցության քարտուղար Արամ Սաֆարյանի եւ եւ ավելի ուշ «Ազգի» հարցերին ի պատասխան ՀՀԿ փոխնախագահի եւ խորհրդարանական խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանի հնչեցրած գնահատականներին ԵԱՀԿ արտգործնախարարների՝ հուլիսի 17-ին Ալմաթիում անցկացվող ոչ պաշտոնական գագաթաժողովից առաջ, որտեղ Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարները հանդիպելու եւ բանակցելու են:**

**Ըստ Արամ Սաֆարյանի, ադրբեջանական կողմից հնչող վերջին օրերի հայտարարությունները, Ադրբեջանական քարոզչամեքենայի՝ կեղծիքի վրա հիմնված աշխուժությունը ունի մեկ բացատրություն. մրցավազք է գնում, թե ո՞վ կստիպի, որ դիմացինն առաջինն ասի «ոչ» Մադրիդյան սկզբունքներին: Որովհետեւ ըստ էության Ադրբեջանն է, որ ոչ մի զիջման պատրաստ չէ, բայց ուզում է ստեղծել հարաբերությունների մի այնպիսի մթնոլորտ, այնպիսի մի պարզամիտ բարդ իրավիճակ, որ Հայաստանն ասի՝ եթե դուք ոչ մի հարցով ոչ մի զիջման պատրաստ չեք, ուրեմն բանակցություններ չեն լինի: Իսկ հետո Ադրբեջանը կասի՝ տեսեք, Հայաստանը մերժեց: Սադրանքի նպատակը հենց դա է:**

*Տես էջ 2*

## ԵԽ գլխավոր քարտուղարը պատասխանել է Լեւոն Տեր-Պետրոսյանին

Այս տարվա մարտի 16-ին Հայ ազգային կոնգրեսի հերթական բողոքի երթի ընթացքում նամակ հանձնվեց Եվրոպայի խորհրդին՝ «Հայաստանում տիրող ճգնաժամի» եւ որպես դրա հաղթահարման ուղի՝ «քաղբանտարկյալների անհապաղ ազատ արձակման, երկրում արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների անցկացման» մասին: Հուլիսի 2-ին ԵԽ գլխավոր քարտուղար՝ **Թորբյորն Յագլանդը** պատասխան նամակ է հղել Լեւոն Տեր-Պետրոսյանին, որը, սակայն, ՀԱԿ-ը՝ ոչ պաշտոնական թարգմանությամբ ներկայացրեց երեկ: Պատասխան նամակում մասնավորապես ասված է. «Ինչպես գիտեք, ԵԽԽՎ 1677 (2009) բանաձեւի ընդունումից հետո էլ Հայաստանը շարունակում է մնալ Խորհրդարանական վեհաժողովի մոնիտորինգի ընթացակարգերի ներքո:

Հետեւաբար կարող եք վստահ լինել, որ Վեհաժողովի հետաքրքրությունը բարձր է լինելու, հատկապես այն հարցով, թե երկարաժամկետ կտրվածքով ի՞նչպես է Հայաստանը հաղթահարում քաղաքական ճգնաժամը եւ 2008 մարտի իրադարձությունների հետեւանքները: Եվրոպայի խորհուրդը մշտապես հստակորեն ցուցադրել է իր ցանկությունը համագործակցել իշխանությունների հետ՝ օժանդակելու վերջիններիս օրենսդրական, վարչական եւ իրավական հարցերում, պաշտպանելու համար, այլ հարցերի հետ մեկտեղ եւ հիմնվելով նաեւ սեփական մոնիտորինգային մեխանիզմների հանձնարարականների վրա, խոսքի եւ լրատվամիջոցների ազատությունը, հավաքների ազատությունը: Վստահեցնում եմ ձեզ, որ Եվրոպայի Խորհուրդը հավատարիմ է մնում օրենքի իշխանության նկատմամբ ամբողջական հարգանքի եւ ձեր երկրի բոլոր քաղաքացիների մարդու իրավունքները ապահովելու պարտավորությանը»: Ինչպես նկատում ենք՝ նամակում ընդգծված է, որ Եվրոպայի խորհուրդը շարունակելու է համագործակցել Հայաստանի իշխանությունների հետ, ինչպես նաեւ որեւէ խոսք չկա քաղբանտարկյալների եւ արտահերթ ընտրությունների մասին:

Հ. Ա.

# Ընթացիկ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Orange-ը եւ RIM-ը կներկայացնեն BlackBerry… ծառայությունը Հայաստանում

**Օրանժ Արմենիա ՓԲԸ**
**«Էրեբունի Պլազա» Բիզնես Կենտրոն**
**Հայաստան, Երեւան, 0010,**
**Վ. Սարգսյան 26/1 փող.**
**Հուլիսի 14, 2010 թ., Երեւան, Հայաստան եւ Վաթերլո, Օնտարիո, Կանադա**

Այսօր Օրանժ Արմենիա եւ Research In Motion (RIM) (NASDAQ: RIMM; TSX: RIM) ընկերությունները հայտարարեցին, որ այս ամառվա ընթացքում Հայաստանում կներկայացնեն BlackBerry… ծառայությունը: BlackBerry… լուծումը սմարթֆոնների, ծրագրային ապահովումների եւ ծառայությունների համատեղում է, որը հնարավորություն է ընձեռում հեշտությամբ օգտվել էլ. փոստից, հեռախոսից, օրացույցից, վեբից, մուլտիմեդիայից եւ բիզնեսում ու առօրյա կյանքում անհրաժեշտ այլ ծրագրերից: BlackBerry… ծառայության մեկնարկով Orange-ի հաճախորդները կարող են վայելել ազատությունը եւ աշխատանքի արդյունավետությունը BlackBerry… սմարթֆոնների օգնությամբ եւ կապի մեջ լինել եւ մշտապես մուտք ունենալ դեպի տեղեկատվություն՝ նույնիսկ լինելով շարժման մեջ:

«Մենք ուրախ ենք առաջարկել մեր հաճախորդներին BlackBerry… ծառայությունը, որը նրանց ազատության եւ արդյունավետության նոր հնարավորություններ կտա ինչպես գործնական, այնպես էլ անձնական կյանքում: Մեր նպատակն է հաճախորդներին առաջարկել սմարթֆոնների իրական ընտրություն, որոնք կհամապատասխանեն ցանկացած կենսակերպի: Սա եւս մի քայլ է՝ փոխելու մեր հաճախորդների կյանքը եւ տեխնոլոգիաների շնորհիվ հարստացնելու այն», ասաց Օրանժ Արմենիայի Գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**:

«Մեզ համար շատ մեծ հաճույք էր համագործակցել Orange-ի հետ BlackBerry… լուծումը Հայաստանում ներկայացնելու համար: BlackBerry… սմարթֆոնները ճիշտ ընտրություն են հատկապես նրանց համար, ովքեր ցանկանում են կապի մեջ լինել գործընկերների, ընկերների եւ ընտանիքի հետ, ինչպես նաեւ հեռախոսի միջոցով հեշտությամբ մուտք ունենալ թե գործնական եւ թե անձնական բնույթի բովանդակությանը», ասաց RIM-ի Կորպորատիվ մարքեթինգի գծով փոխնախագահ **Մարկ Գիբերտը**:

Մեկնարկին Orange-ն իր հաճախորդներին կառաջարկի BlackBerry… Bold 9700 սմարթֆոնը: BlackBerry… Bold 9700 սմարթֆոնը դրսեւորում է գերազանց աշխատանք, ֆունկցիոնալություն եւ հնարավորություններ, որոնք համատեղելի են 3G HSDPA ցանցերի հետ, ինչպես նաեւ ունի գերարդիական պրոցեսոր (624 ՄՀց), 256 ՄԲ հիշողություն, ներկառուցված GPS եւ Wi-Fi…, 3.2ՄՊ տեսախցիկ եւ բարձր հստակության շլացնող էկրան: Նորագույն ինժեներական լուծումները եւ պրեմիում որակը տարածվում են նաեւ այս սարքի արտաքին տեսքի վրա, որն առանձնանում է ինտեգրված սենսորային հարթակով, գերզգայուն, տարբերակված եւ հատուկ տաշվածքներով ստեղնաշարով: Մուգ քրոմային շրջանակը եւ կաշենման հետնամասը սմարթֆոնին




հաղորդում են կոկիկ եւ նրբագեղ տեսք, իսկ նեղ պրոֆիլը, հարմար ծանրությունը եւ փափուկ կողամասերը աներեւակայելի հարմարավետության զգացողություն են փոխանցում այն ափում պահելիս:

Orange-ը BlackBerry… ծառայություններ կառաջարկի կորպորատիվ հաճախորդներին, փոքր բիզնեսներին եւ անհատներին:

### Orange-ի մասին

Օրանժ Արմենիան, որը Ֆրանս Տելեկոմ Խմբի մասն է կազմում, Հայաստանում շարժական հեռախոսակապի եւ ինտերնետի ծառայություններ է մատուցում 2009 թ. նոյեմբերի 5-ից:

Ընկերությունը Հայաստանում 2009 թ. կատարել է 140 մլն եվրոյի ներդրումներ, իսկ մինչեւ 2010 թ. վերջ կիրականացնի եւս 50 մլն դոլարի ներդրումներ եւ ապահովում է բջջային կապի եւ գերարագ ինտերնետի հասանելիությունը Հայաստանի 500 քաղաքներում եւ գյուղերում: Orange-ի 3G+ ծածկույթն այսօր ամենաընդարձակն է Հայաստանում եւ ծածկում է բնակչության ավելի քան 85% տոկոսը:

Ընկերությունն իր գործունեության առաջին ամսում գրանցեց ձայնային ծառայությունների 100,000-րդ բաժանորդի մուտքը: 2010 թ. ապրիլի վերջի դրությամբ Օրանժ Արմենիան ուներ 250,000 ակտիվ բաժանորդ, որոնցից 25,000-ը գերարագ ինտերնետի բաժանորդներ են:

Հավելյալ տեղեկությունների համար՝ lilit.martirosyan@orange-ftgroup.am

### Research In Motion ընկերության մասին (RIM)

Research In Motion ընկերությունն ամբողջ աշխարհում շարժական կապի շուկայում նորարարական լուծումներ ներկայացնող առաջատար նախագծող, արտադրող եւ շուկայավարող ընկերություն է: Ինտեգրված համակարգային եւ ծրագրային ապահովումների, ծառայությունների մշակման միջոցով, որոնք համատեղելի են բազմաթիվ անլար ցանցերի հետ, RIM-ը պլատֆորմներ եւ լուծումներ է առաջարկում մշտապես զարգացող տեղեկատվական աղբյուրներից օգտվելու համար, ինչպիսիք են՝ էլեկտրոնային փոստը, հեռախոսը, կարճ հաղորդագրությունները, ինտերնետը եւ ինտերնետի հիման վրա գործող ծրագրերը: RIM-ի տեխնոլոգիաները նաեւ հնարավորություն են ընձեռում այլ նախագծողներին եւ արտադրողներին բարելավել իրենց ապրանքներն ու ծառայությունները անլար տեխնոլոգիաների միջոցով տվյալների փոխանցման համար: RIM-ի մրցանակակիր ապրանքներն ու ծառայությունները եւ ներկառուցված տեխնոլոգիաներն օգտագործվում են աշխարհի հազարավոր կազմակերպությունների կողմից եւ ներառում են BlackBerry… անլար պլատֆորմը, RIM Wireless Handheld արտադրական գիծը, ծրագրային զարգացման գործիքներ, ռադիո-մոդեմներ եւ ծրագրերի եւ սարքավորումների լիցենզավորման համաձայնագրեր: RIM-ը հիմնվել է 1984 թ. Վաթերլոյում (Օնտարիո, Կանադա), որտեղ գտնվում է ընկերության գլխամասը: Ընկերությունը գրասենյակներ ունի Հյուսիսային Ամերիկայում, Եվրոպայում, Ասիայում եւ Լատինական Ամերիկայում: RIM-ը ներկայացված է NASDAQ արժեթղթերի շուկայում (NASDAQ: RIMM) եւ Տորոնտոյի արժեթղթերի շուկայում (TSX: RIM):

**Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.rim.com կամ www.blackberry.com:**

ԵՎՍ ՄԵԿ «ՀԱՄԵՂ» ՊԱՏԱՌ

## Մաշտոցի պողոտայի այգին առեւտրի կենտրոն դառնալու ճանապարհին

Մայրաքաղաքի եզակի այգիներից մեկը, որը հանրային սեփականություն է, շուտով կվերածվի հերթական vip օբյեկտին: Խոսքը Մաշտոցի պողոտայից մինչեւ Սարյան փողոց ձգվող հատվածի այգու մասին է՝ սկիզբը «Մալիբու» սրճարանից: Կառուցապատման առումով «յուղոտ» պատառ տարածքում նախատեսվում է կառուցել երկհարկանի ստորգետնյա շինություն, որի հարկերից մեկում կլինի ավտոկայանատեղի, մյուսում՝ առեւտրի կենտրոն: Նախատեսվում է կառուցել նաեւ վերգետնյա մեկհարկանի շինություն՝ սրճարանների եւ խանութների համար: Իսկ գլխավոր փոստի դիմաց՝ ներկայիս չգործող շատրվանների փոխարեն՝ հյուրանոց:

Կառուցապատման վերաբերյալ «Երեւաննախագծում» տեղի է ունեցել նախնական քննարկում՝ մասնակցությամբ բնապահպանների, ճարտարապետների միության նախագահի, Երեւան քաղաքի գլխավոր ճարտարապետի եւ Երեւանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության ներկայացուցիչների: Քննարկմանը մասնակից «Թրանսփերենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կազմակերպության շրջակա միջավայրի քաղաքականության փորձագետ **Սոնա Այվազյանի** ներկայացմամբ՝ կառուցապատող ընկերությունը «Նոր Երեւան» ՍՊԸ-ն է, որ պատկանում է «Տաշիր Գրուպին»:

«Նախագիծը խայտառակություն էր: Վերգետնյա մեկհարկանի շինությունն այնքան անճոռնի է, որ անհնար է քաղաքի կենտրոնում նման կառույց պատկերացնել: Փաստորեն սա էլ կժառանգի Օղակաձեւ այգու ճակատագիրը, միայն այն բացառությամբ, որ այստեղ կա մեկ սեփականատեր, եւ վերգետնյա շինությունը լինելու է ապակեպատ», ասաց նա «**Ազգ**»-ի հետ հեռախոսազրույցում: Հանրային սեփականություն հանդիսացող այգում կան բազմաթիվ ծառեր, բույսեր, որոնք բետոնապատ անապատ հիշեցնող Երեւանի եզակի կանաչ գոտիներից են: «Այգում հիմնականում կարագաչներ եւ սոսիներ են, որոնց կարիքը զգում ենք եւ չպետք է թույլ տալ, որ քաղաքի համար էկոլոգիական առումով շատ արժեքավոր այդ հատվածը վերանա», մտահոգությունն է հայտնում բնապահպան **Կարինե Դանիելյանը**: Փաստարկը, որ ծառերը կկտրեն, բայց փոխարենը նոր շիվեր կտնկեն, Դանիելյանին չի գոհացնում. լավագույն դեպքում 20 տարի հետո այդ շիվերը ծառ կդառնան: «Ռիսկը հսկայական է: Երեւանն էկոլոգիական լուրջ խնդիրներ ունի, եւ ձեռք տալ սոսիներին՝ նշանակում է կատարել մարդկանց հանդեպ հանցագործություն»:

Կարինե Դանիելյանը նշում է, որ քաղաքի գլխավոր պողոտան արդեն ութ տարի չի ոռոգվում, քանի որ կանաչ տարածքները գտնվում են ճանապարհի վրա: «Սկզբից ոռոգումն են դադարեցնում, թույլ են տալիս, որ ծառերը չորանան, հետո աղբը չեն հավաքում, դեռ մի բան էլ իրենք են ավելացնում, հետո հայտարարում են,



որ պետք է բարեկարգել: Բնապահպանների բողոքին էլ պատասխանում են, թե ինչու եք էս աղբանոցը, առնետանոցը պաշտպանում: Դրանք պետք է անհապաղ կառուցապատել: Բայց որեւէ մեկը չի ասում՝ տարածքները մաքրենք, գեղեցկացնենք, ծառ ու ծաղիկ տնկենք»:

Կարինե Դանիելյանի ներկայացմամբ՝ բնապահպանները դեմ են եւ պահանջել են մինչեւ կառուցապատումը լուրջ եւ բաց քննարկումներ կազմակերպել, որոնց արդյունքում հնարավոր լինի փրկել այգին: Սակայն հաշվի առնելով նախորդ փորձերը՝ Օղակաձեւ այգի, Դալմայի այգիներ, Գետառ, հազիվ թե որեւէ բան փոխվի: Խնդիրն այս պարագայում ոչ թե բողոքողներն են, այլ կառուցապատողները, նույնն է, թե իշխանությունները, որոնք արդեն ոչ ոքի կարծիքը հաշվի չեն առնում:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Մրցավազք՝ դիմացինին ստիպելու ...

*1-ին էջից*

Հենց դրանով է պայմանավորված, որ Եվրոպայի խորհրդում, միջազգային տարբեր կազմակերպություններում ադրբեջանական պատվիրակները վեր են հանել 1988 թվականից գզրոցներում պահված բավական մաշված, նամշահոտ փաստարկները, որը պիտի ստիպի մեր ներվերը քայքայել. «Ես կարծում եմ, որ սա նյարդերի պայքար է եւ սրան պետք է պատրաստ լինել: Համենայնդեպս մենք հայտարարել ենք, որ բանակցությունների այս նոր փուլին Հայաստանը պատրաստ է, այն պայմանով, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների առաջարկություններում բերված կետերից բոլորն ունենան համարժեք, հավասարազոր նշանակություն եւ բովանդակություն, եւ դրանցից մեկից հրաժարումը եւ ձգձգումը, խաբելը մեկի հարցում՝ կնշանակի բանակցային գործընթացի ձախողում»:

«Ի՞նչ է զիջելու Հայաստանը», մեր հարցին ի պատասխան Ա. Սաֆարյանն առաջարկեց առայժմ այդ մասին չխոսել՝ մեր արտգործնախարարն ի պատասխան համանախագահ երկրների նախագահների Կանադայում արած հայտարարության, համաձայնություն է տվել Մադրիդյան սկզբունքների հիմքի վրա բանակցությունները շարունակել, իսկ փոխզիջումների խնդիրը թող դեռ մյուս կողմից հնչեն՝ կտեսնենք:

Գալուստ Սահակյանը, սակայն, կարծում էր, որ ադրբեջանական կողմի հայտարարություններին կարելի է ուշադրություն դարձնել նույն (հունիստասնության) պրովակացիայի շրջանակներում, իսկ Ալմաթիում պարզից էլ պարզ է՝ նույն Մադրիդյան սկզբունքներից վերցրած 5-6 մոտեցումներն են, որոնք քննարկման խնդիր են դառնալու, իսկ որեւէ փաստաթուղթ այնտեղ չի ստորագրվելու, դա նախագահների շրջանակի քննարկման հարց է ավելի շուտ եւ ոչ թե արտգործնախարարների մակարդակի: Սահակյանն ասում է, որ մեր դիրքորոշումը չի փոխվել, չի փոխվելու եւ հետեւյալն է՝ նախ եւ առաջ Ղարաբաղի կարգավիճակը: Իսկ թե տարածքներ վերադարձնելու խոսակցությունը ինչո՞ւ է հիմա ծավալվում, ո՞ր պահն է Ղարաբաղյան բանակցային գործընթացում խնդրում, ըստ Գ. Սահակյանի՝ այսօր բանակցությունները փաստացի գնում են ավելի մեծ ակտիվության, որովհետեւ արդեն գերտերություններն են փորձում իրենց ցանկացած միջոցառումներին քննարկելի դարձնել հարցը, բայց եւ վերջում անպայմանորեն ասում են՝ երկու պետությունների խնդիրն է, այնպես որ այսօր որեւէ փաստաթուղթ հնարավոր չէ ստորագրել. Նախ, տարածքներ տալուց ի՞նչ պիտի շահեն Ղարաբաղը եւ Հայաստանը՝ դրա մասին խոսք անգամ չկա. «Մենք հարցադրումը դնում ենք, որ Ղարաբաղը երբեւիցե Ադրբեջանի կազմում պիտի չլինի: Առավել եւս՝ երբ ասում են, թե հանրաքվեի կամ Ղարաբաղի ժողովրդի կամարտահայտության վերաբերյալ է խոսքը, եւ ասում են , որ փախստականները պետք է վերադառնան իրենց տները՝ չի մեկնաբանվում, թե այդ փախստականները ինչպե՞ս եւ որտե՞ղ պիտի վերադառնան, ի՞նչ իրավական միավոր՝ պետությա՞ն, Ղարաբաղի՞, թե՞ միջազգային սուբյեկտի: Ուրեմն՝ մինչեւ չլուծվի Ղարաբաղի կարգավիճակի հարցը, որեւէ փաստաթղթի ստորագրման խնդիր չի կարող առաջանալ: Մեկ փաստաթուղթ կա, որ Հայաստանը կարող է ստորագրել, որը մեր երկրի նախագահն է առաջարկել՝ ուժի չկիրառման փաստաթուղթը: Դա բավականին ձեռնտու փաստաթուղթ է եւ մեզ եւ Ադրբեջանի ժողովրդի համար»:

Իսկ ճնշումներին ինչպե՞ս ենք հակադրելու. «Մենք պիտի ոչ թե հակադրվենք, այլ պիտի չճնշվենք, մենք վճռական ենք եւ չենք ճնշվելու, եւ ճնշումներ էլ չենք տեսնում», ասաց Գ. Սահակյանը: «Ալիեւը մեկ օր առաջ նորից խոսում էր ռազմական ճանապարհի մասին» մեր հիշեցմանն ի պատասխան էլ ասաց. «Մենք էլ մեր մոտեցումներն ենք շարադրում, մեր նախագահն արդեն տարիուկես է եւ Լոնդոնում, եւ Ամերիկայում, եւ Գերմանիայում մեր պետության, մեր քաղաքական թիմերի տեսակետներն ամենամեծ ամբիոններից ասել է»:

AZG NEW PDF.qxd 14/07/2010 21:32 Page 1



ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

# Այս տարի կսկսվի 3 նախագծերի իրականացումը

*Մեղրու ՀԷԿ, Իրան-Հայաստան նավթատար եւ բարձր լարման էլեկտրահաղորդման գիծ*

Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար **Արմեն Մովսիսյանը** երեկ կառավարությունում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ ներկայացրեց ոլորտի այս տարվա ցուցանիշները: Այս տարվա առաջին կիսամյակում էլեկտրաէներգիայի արտադրությունն աճել է 15 տոկոսով, ավելացել է ներքին սպառումը՝ հիմնականում արդյունաբերության մեջ: Ըստ նախարարի՝ 25 տոկոսով ավելացել է հանքանյութի արդյունահանումը:

Ամենամեծ ձեռքբերումն Արմեն Մովսիսյանը համարեց Երեւանի նոր շոգեգազային տուրբինով էներգաբլոկի կառուցումը, ինչը հնարավորություն տվեց խնայողություն ունենալու եւ էլեկտրաէներգիայի սակագները չբարձրացնելու: Այս տարի



կսկսվեն մի քանի խոշոր նախագծեր՝ Մեղրու ՀԷԿ-ի, Իրանից նավթատար խողովակի եւ բարձր լարման էլեկտրահաղորդման գծի շինարարությունները: Մեղրու ՀԷԿ-ի հզորությունների մասին տրված հարցին պատասխանելով՝ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարը հայտնեց, որ այն կունենա 140 մգվտ հզորություն եւ կարտադրի 800-850 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա: Արմեն Մովսիսյանը նշեց նաեւ, որ Հայաստանի էներգետիկ հզորությունների ավելացման էլեկտրաէներգիայի ավելցուկն իրացնելու խնդիր չի լինի՝ նկատի ունենալով Իրանի հետ կնքված 25 տարվա պայմանագիրը: Ինչ վերաբերում է Թուրքիային էլեկտրաէներգիա վաճառելուն, ապա բանակցությունները շարունակվում են, թուրքական կողմը նույնպես տեխնիկապես պատրաստ է ստանալ էլեկտրական էներգիա, բայց քաղաքական խնդրի առկայությունը հնարավորություն չի տալիս խոսելու, թե երբ դա հնարավոր կլինի:

Իրանից Հայաստան եկող նավթատար խողովակաշարով Հայաստանը կստանա էժան բենզին եւ դիզվառելիք անմիջապես Պարսից ծոցից, որտեղ գները 10-15 տոկոսով ավելի էժան են, քան Միջերկրական ծովի շրջակայքում գտնվող երկրներում: 3-4 անգամ կնվազեն տրանսպորտային ծախսերը, եւ կբարձրանա մեր երկրի անվտանգությունն այս հարցում: Նախարարը հիշեցրեց 2 տարի առաջ ստեղծված վիճակը, երբ ռուս-վրացական պատերազմի հետեւանքով Հայաստանում վառելիքի խնդիր էր առաջացել, ասելով, որ խողովակաշարի առկայության դեպքում նման իրավիճակ չի լինի:

Կապանի տարածաշրջանում ուրանի հանքավայրերի շահագործման առնչությամբ տեղի բնակչության բողոքների վերաբերյալ էներգետիկայի նախարարն ասաց, որ այս պահին ընթանում են միայն ուրանի պաշարների հետախուզման աշխատանքները, որոնք կտեւեն 2 տարի: Դրանից հետո միայն կորոշվի՝ տնտեսապես շահավե՞տ է դա, թե՞ ոչ եւ որքանո՞վ է անվտանգ կամ վտանգավոր շրջապատի համար:

Նոր ատոմակայանի կառուցման մասին Արմեն Մովսիսյանը տեղեկացրեց, որ շուտով կհրապարակվի տեխնիկատնտեսական հիմնավորումը, որից հետո ավելի առարկայական խոսակցություն կլինի ԱԷԿ կառուցելու հարցի շուրջը:

Վրաստանի կողմից Հայաստան մտնող գազատարի հնարավոր վաճառքի վերաբերյալ տրված հարցին նախարարը պատասխանեց, որ Վրաստանը նման մտադրության մասին չի հայտնել, եւ խոսքը միայն այդ գազատարը ռազմավարական նշանակության օբյեկտների ցանկից հանելու մասին է: Համենայն դեպս, Արմեն Մովսիսյանի տեղեկացմամբ, այս պահին Հայաստանի կառավարությունը այդ հարցի հետ կապված մտահոգություններ չունի, եւ եթե ապագայում գազատարը վաճառքի էլ հանվի, դա վտանգավոր չի կարող լինել:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Կենաս Սաուդաբաեւը «խուսափելով ջանում է»

Ղազախստանը անկախությունից ի վեր լավագույն ժամանակներն է ապրում, մասնավորապես՝ արտաքին քաղաքականության ոլորտում, միջազգային հարաբերություններում: Ի վերջո «ղազախ ազգի առաջնորդ» օրենսդրորեն հռչակված նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի եւ նախկինում թատերական ռեժիսոր, այժմ արտգործնախարար Կենաս Սաուդաբաեւի ջանքերով այսօր Աստանան ղեկավարում է ԵԱՀԿ-ում, ԵՎՐԱԶԷՍ-ում, իսկ հաջորդ տարվանից կգլխավորի Իսլամական համաժողով կազմակերպությունը, այն նույն կազմակերպությունը, որը վերջերս Հայաստանին ճանաչեց ագրեսոր, ընդ որում՝ Ղազախստանի մասնակցությամբ (այս հանգամանքին մեր թերթը անդրադարձել է-Հ. Ա.): Թե ի՞նչ է ագրեսորը եւ որքանո՞վ է Հայաստանը համապատասխանում այդ որակավորմանը, այլեւս չքննարկենք, պարզապես ընդգծենք, որ իսլամական Ղազախստանը՝ ԵԱՀԿ գործող նախագահը, հունիսի 16-17-ը Ալմաթիում կկազմակերպի ԵԱՀԿ արտգործնախարարների ոչ պաշտոնական գագաթաժողով, որի շրջանակներում էլ, ըստ ԵԱՀԿ-ի պաշտոնական կայքէջի, նախատեսվում է հանդիպում ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի, Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի միջեւ, որոնց «կընկերակցեն» նաեւ Ֆրանսիայի, Ռուսաստանի արտգործնախարարներ Կուշներն ու Լավրովը, ինչպես նաեւ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը: Ալմաթիի գագաթաժողովից առաջ Ղազախստանի արտգործնախարար Սաուդաբաեւը կազմակերպել է «մեծ զրույց»՝ ԱՊՀ եւ Բալթյան երկրների ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ: Քանի որ զրույցը ոչ միայն խորագրով, այլեւ բովանդակությամբ բավական մեծ է, անդրադառնանք միայն «նախկին սովետական տարածքում ծագած հակամարտություններ» թեմային:

## «Խաղաղ բանակցությունների հակառակ երեսը՝ փակուղի է»

Իր խոսքում **Սաուդաբաեւը** մի քանի անգամ շեշտել է, որ ամեն մի հակամարտություն պետք է լուծվի բացառապես դիվանագիտական, խաղաղ բանակցություններով. «Ուժի կիրառումը ճանապարհ է դեպի փակուղի, դեպի՝ ոչինչ», շեշտել է Սաուդաբաեւը: Միեւնույն ժամանակ Բաքվում **Իլհամ Ալիեւը**, «երեւի տեղյակ չլինելով նաեւ ղազախ արտգործնախարարի վերոհիշյալ հայտարարությանը», եւս մեկ անգամ, իսկ ավելի ճիշտ՝ միեւնույն ելույթում տասնյակ անգամներ, շեշտել է՝ «Ադրբեջանի հզոր բանակի նշանակությունը». «Չնայած մենք ուզում ենք հակամարտությունը լուծել խաղաղ ճանապարհով, բայց մեր ռազմական հզորությունը մեր դիրքերը բանակցություններում ավելի ամուր կդարձնի. Ադրբեջանը շարունակելու է ռազմական տեխնիկայի եւ գույքի ձեռքբերումը եւ այս նպատակով բյուջետային հատկացումները», ասել է Ալիեւը: Թե ի՞նչ կապ ունի ռազմական հզորությունը բանակցություններում, ո՞ւմ է պատասխանում Ալիեւը՝ «շարունակելով ֆինանսական հատկացումները ռազմական ոլորտին», թողնենք Ադրբեջանի նախագահի տրամաբանությանը, իսկ մենք շարունակենք ներկայացնել... Թուրքիայում նախկին դեսպանի խոսքերը: Այո, Կենաս Սաուդաբաեւը Ղազախստանի առաջին դեսպանն է եղել Թուրքիայում՝ 1992-96-ը որոշ ընդմիջումներով, նա հիանալի տիրապետում է թուրքերենին, ինչպես հայտնում են որոշ ղազախական լրատվամիջոցներ՝ «ինչպես մայրենին»: Իսկ թե ինչո՞ւ ԵԱՀԿ-ում Ղազախստանի նախագահությունից հետո Թուրքիան ակտիվացավ, Դավութօղլուն հաճախ հյուրընկալվում է «եղբայրական Ղազախստանում», եւ Անկարան համառորեն «իր հարցն է» համարում Ղարաբաղի հարցը, թողնենք մեր ընթերցողների տրամաբանությանը:

## «ԼՂ հարցն առաջնային է ԵԱՀԿ գործող նախագահողի համար»

Հենց այսպես է պատասխանել Սաուդաբաեւը Ղարաբաղի վերաբերյալ հարցին եւ որպես խոսքերի ապացույց նշել. «Ամենեւին պատահական չէր, որ ԵԱՀԿ նախագահողի կարգավիճակում իմ առաջին տարածաշրջանային այցը կատարեցի Երեւան եւ Բաքու»: Ղազախ արտգործնախարարի հետագա խոսքերը՝ Հարավային Կովկասի վերաբերյալ, որոշակիորեն «պարզեցնում» են, թե ո՞վ, ավելի ճիշտ՝ ի՞նչն է հատկապես կարեւորում Ղազախստանը մեր տարածաշրջանում. «Կովկասը մեծ դեր է խաղում համաշխարհային գործընթացներում. այստեղով է անցնում կասպյան նավթը, այն էներգետիկ կամուրջ է դեպի Եվրոպա», նշել է Սաուդաբաեւը: Հարցին, թե չի՞ կարծում արդյոք ԵԱՀԿ գործող նախագահը, որ ԼՂ հիմնահարցը անհնար է լուծել առանց Ղարաբաղ այցելելու եւ ղարաբաղցիների կարծիքը հաշվի առնելու, Սաուդաբաեւը պարզապես չի պատասխանել, փոխարենը շեշտել է. «Ամուր խաղաղության կարելի է հասնել միայն փոխզիջումների միջոցով: Այս կապակցությամբ ես շատ կարեւորում եմ Մինսկի խմբի համանախագահների Կանադայում արած հայտարարությունը, այժմ էլ մենք փորձում ենք կազմակերպել Հայաստանի, Ադրբեջանի եւ միջնորդ կողմերի արտգործնախարարների հանդիպում Ալմաթիում հուլիսի16-17-ը»:

Սաուդաբաեւը խոսել է այլ հակամարտություններից եւս, ընդգծենք միայն, որ Հարավային Օսիայի եւ Աբխազիայի մասին խոսելիս ԵԱՀԿ գործող նախագահը շեշտել է. «Անհրաժեշտ են ընդառաջ քայլեր ինչպես Սուխումից ու Ցխինվալից, այնպես էլ Թբիլիսիից»: Սաուդաբաեւը այստեղ՝ ի տարբերություն Ղարաբաղի հարցի, հակամարտող կողմեր տեսնում է Սուխումին, Ցխինվալին եւ Թբիլիսիին: Իսկ Մերձնեստրի հարցում ԵԱՀԿ գործող նախագահը միակողմանի դիրքորոշում ունի. «Ղազախստանը պաշտպանում է Մոլդովայի տարածքային ամբողջականությունը», նշել է Սաուդաբաեւը: Այսինքն՝ ըստ ԵԱՀԿ նախագահի, «Ղարաբաղում եւ առհասարակ բոլոր հակամարտություններում փոխզիջումներ են պետք», «Աբխազականում եւ հարավօսականում՝ ընդառաջ քայլեր», սակայն՝ «մենք պաշտպանում ենք Մոլդովայի տարածքային ամբողջականությունը»...

Վերջում, «տարօրինակորեն», Ղազախստանի արտգործնախարարը ընդգծել է, որ Աստանան անչափ կարեւորում է ՀԱՊԿ-ի նշանակությունը. «Ղազախստանը հատկապես կարեւորում է այն միասնական ջանքերը, որոնք գործադրում են ՀԱՊԿ անդամ երկրները՝ արտաքին մարտահրավերներին ու վտանգներին դիմագրավվելու ուղղությամբ», նշել է Սաուդաբաեւը: Հիշեցնենք, Հայաստանը, ի տարբերություն Ադրբեջանի, ՀԱՊԿ անդամ է:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Ադրբեջանը պատրա՞ստ է շարունակելու բանակցությունները...

*1-ին էջից*

Այս առնչությամբ Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը նշեց, որ Ադրբեջանի կողմից ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովում բանաձեւը շրջանառության մեջ դնելը բացասական ազդեցություն կունենա բանակցային գործընթացի վրա: Ըստ Նալբանդյանի՝ այս կարծիքին են նաեւ բոլոր այն երկրները, որոնք կողմերին աջակցում են ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման գործընթացում:

Անդրադառնալով Ադրբեջանի՝ մադրիդյան փաստաթղթի բնույթի մասին վերջին հայտարարություններին, Նալբանդյանը հիշեցրեց, որ առաջին անգամ չէ, որ Ադրբեջանը մերժում կամ հերքում է ինչ-որ բան. «Իրականությունն այն է, որ եռանախագահները 2007 թ. նոյեմբերին կողմերին ներկայացրին մադրիդյան փաստաթուղթը, եւ այն, իբրեւ պաշտոնական առաջարկ, ի պահ հանձնվեց Վիեննայում ԵԱՀԿ քարտուղարությանը»:

Դրանից հետո, ըստ նախարարի, եղել են մի շարք աշխատանքային առաջարկներ՝ մադրիդյան փաստաթղթի հիման վրա: «Երբ Ադրբեջանը հայտարարեց, որ կարող է ընդունել 2009 թ. դեկտեմբերյան աշխատանքային առաջարկը, բայց որոշ բացառություններով, պարզվեց, որ բացառություններն ավելի շատ են, քան ընդունված մասը: Հետո՝ ի՞նչ է նշանակում ընդունել բացառություններով: Դա փաստացի նշանակում է չընդունել այն», մեկնաբանեց Նալբանդյանը:

Նրա խոսքերով, 2010 թ. Սոչիում ՌԴ նախագահ Դ. Մեդվեդեւի նախաձեռնությամբ եւ ներկայությամբ կայացած Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց հանձնարարել ԱԳ նախարարներին՝ շարունակել բանակցությունները Ռուսաստանի Դաշնության ԱԳ նախարարի միջնորդությամբ, եւ նախարար Լավրովի միջնորդությունը վայելում էր եւ վայելում է Միացյալ Նահանգների ու Ֆրանսիայի լիակատար աջակցությունը:

2010 թ. փետրվար-հունիս ամիսներին» Նալբանդյանի ներկայացմամբ, քննարկվել են մի շարք աշխատանքային առաջարկներ՝ մադրիդյան փաստաթղթի հիման վրա: Հունիսի 17-ին էլ Սանկտ Պետերբուրգի հանդիպմանը կողմերին ներկայացվել է մադրիդյան փաստաթղթի վերջին տարբերակը, եւ համաձայնություն է ձեռք բերվել շարունակելու բանակցությունները հենց այդ տարբերակի հիման վրա: Ըստ Նալբանդյանի՝ «Ալմաթիում կայանալիք հնարավոր հանդիպման գլխավոր հարցը պետք է լինի՝ արդյո՞ք Ադրբեջանը պատրաստ է հարգել պայմանավորվածությունները, թե՞ վերստին մերժում է, ինչպես բազմիցս արել է նախկինում»:

Լեհաստանի արտգործնախարար Ռադոսլավ Սիկորսկին ղարաբաղյան հարցի առնչությամբ նախ նշեց, որ Լեհաստանը կողմ է խաղաղ գործընթացին եւ աջակցում է այդ ուղղությամբ ջանքերին: Սակայն Սիկորսկու համար դիվանագիտորեն լղոզված ու անասելի ընդհանրական պատասխանը նախընտրելի եղավ, երբ հարցը վերաբերում էր Ադրբեջանի ռազմատենչ հռետորաբանությանը, սպառազինվելու մրցավազքին ու այդ երկրի՝ Արեւելյան գործընկերության ԵՄ ծրագրի մաս կազմելու իրականությանը:

Լեհաստանի ԱԳ նախարարը, ներկայացնելով Արեւելյան գործընկերության ծրագիրը նախաձեռնող երկրներից մեկը, բավարարվեց հայտարարելով, թե պետք է հաշվի առնել այն փաստը, որ Արեւելյան գործընկերության մասնակից պետությունները ունեն երկկողմ խնդիրներ, եւ դա չի նշանակում, որ նրանք պետք է լուծեն իրենց երկկողմ խնդիրները ծրագրի շրջանակում: «Ինչքան շատ երկրներ ընդգրկված լինեն Արեւելյան գործընկերության ծրագրում, այնքան հեշտ կլինի իրենց միջեւ եղած այդ խնդիրները լուծել», ասաց լեհ նախարարը:

Ասուլիսի հայտարարությունների եւս մեկ թեմա վերաբերում էր նախարարների կողմից մինչեւ ասուլիսը տեղի ունեցած հանդիպմանը քննարկված հարցերից մեկին՝ Հայաստանի եւ Լեհաստանի միջեւ վիզային ռեժիմի պարզեցմանը, իսկ հնարավորության դեպքում՝ նաեւ վերացմանը: Ռադոսլավ Սիկորսկին նշեց, որ Լեհաստանի պարագայում վիզա նշանակում է ինչպես հենց այդ երկրի, այնպես էլ շենգենյան անցագրի տրամադրում:

«Շենգենյան վիզաների տրամադրման հեշտացման կարգը մի քիչ ավելի բարդ է, քան ազգայինը, որովհետեւ այն պայմանագրով հաստատված է եւ Եվրոմիության երկրների համատեղ համաձայնության հիման վրա պետք է տեղի ունենա: Իսկ մյուս տեսակի վիզաների խնդիրը մենք քննարկեցինք նախարար Նալբանդյանի հետ. խոսքը ազգային՝ լեհական վիզաների մասին է, որոնց գները, ինչպես մենք արդեն Ուկրաինայի հետ փորձ ունենք, կփորձենք նվազագույնի իջեցնել», նշեց Սիկորսկին:

Հայաստանի կողմից նույն այս հարցի առնչությամբ արտոնություններ տրամադրելու մասով Էդվարդ Նալբանդյանն ավելացրեց, որ Հայաստանը եւս շահագրգիռ է եւ պատրաստ է Լեհաստանի եւ Եվրոմիության այլ երկրների հետ քայլեր ձեռնարկել արտոնագրային ռեժիմը դյուրացնելու համար:

Ռադոսլավ Սիկորսկին երեկ այցելել է Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանին եւ ծաղկեպսակ դրել: Լեհաստանի ԱԳՆ ղեկավարը նաեւ ծառ է տնկել Հիշատակի ծառուղում: Նշենք, որ դեռեւս 2005 թվականի ապրիլին Լեհաստանի Սեյմը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու միաձայն որոշում ընդունեց:

Լեհաստանի ԱԳ նախարարը երեկ հանդիպել է նաեւ Հայաստանի նախագահի եւ վարչապետի հետ:

AZG NEW PDF.qxd 14/07/2010 21:32 Page 1



# Վերջ Թուրքիայի հերքողական քաղաքականության աջակցմանը

## *Գերմանիայի խորհրդարանը եւ կառավարությունը պետք է ճանաչեն օսմանյան Թուրքիայում կատարված ցեղասպանությունը եւ ընդունեն Գերմանիայի պատասխանատվությունը*

***Օրեր առաջ տեղեկացրել էինք բեռլինաբնակ փաստաբան Ստեփան Թաշչյանի դատական նախաձեռնության մասին։ Գերմանահայ իրավաբանը դատական հայց է ներկայացրել գերմանական դատարանում ընդդեմ կառավարության՝ պահանջելով Հայոց ցեղասպանության ճանաչումը։ Անհատական այս նախաձեռնությունը բնականաբար կարիք է զգում հասարակական ուժեղ աջակցության, ինչը մեր տպավորությամբ մտադիր է անել Եվրոպայի հայերի համագումարի (Assembly of Armenians of Europe) Գերմանիայի բաժանմունքը բժ. Րաֆֆի Պետիկյանի գլխավորությամբ, ինչի մասին վկայում է ստորեւ տպագրվող հաղորդագրությունը։***

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԼՐԱՏՈՒ, ԱԹԵՆՔ, 12.07.2010։ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ մեկուկես միլիոն հայեր, ինչպես նաեւ հարյուրհազարավոր ասորիներ զոհ դարձան օսմանյան Թուրքիայի կազմակերպված եւ իրագործված ցեղասպանությանը։ Եվրոպական խորհրդարանը 1987 թ. հունիսին կայացված վճռագրի մեջ նշում է, որ 1915-1917 թթ. օսմանյան Թուրքիայի հայերի դեմ տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները համարվում են ցեղասպանություն ըստ ՄԱԿ-ի համաժողովի 1948 թ. դեկտեմբերի 9-ի հրապարակած ցեղասպանության կանխման, ինչպես նաեւ հետապնդման կոնվենցիայի։ Դրանից հետո բազմաթիվ երկրների այլ խորհրդարաններ ճանաչեցին այդ հանցագործությունը որպես ցեղասպանություն։ Բազմաթիվ միջազգային հաստատություններ եւ հայտնի գիտնականներ զուր կերպով կոչ արեցին Թուրքիային վերջ դնելու իր հերքողական քաղաքականությանը, ինչպես նաեւ վերացնել բոլոր տեսակի պետական խոչընդոտներն ու սահմանափակումները, որպեսզի հնարավորություն տրվի բաց եւ քննադատական բանավեճի թուրքական պատմության այդ փուլի շուրջ։ Մյուս կողմից, օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած ցեղասպանության մեջ Գերմանիայի մեղսակցության մասնաբաժինը արդեն հաստատված է։

2005 թ. ապրիլի 21-ին գերմանական խորհրդարան/Բունդեսթագում տեղի ունեցած բանավեճի ժամանակ Կանաչների պատգամավոր **Ֆրից Քուն ասել է**. «Մենք ոչ միայն տեղյակ ենք, այլ նաեւ մասնակից»։ Քրիստոնեա-դեմոկրատների պատգամավոր **Ֆրիցբերտ Ֆլյուգերն** իր խոսքի մեջ հավաստիացնում է, որ գերմանացիները գիտակցում են գերմանական կայսրության մեղսակցությունը հայերի կոտորածի մեջ։ «Նաեւ Գերմանիան պետք է պատասխանատվություն կրի նրա համար, որ աջակցել է հայ ժողովրդի դեմ տեղի ունեցած հանցագործության անտեսմանը», այսպիսի ձեւակերպում կա հունիսին խորհրդարանի կայացրած որոշման մեջ։ Հինգ տարի անց հարց է առաջադրվում, թե ինչ հետեւանքներ ունեցավ այս որոշումը եւ ինչ տեսակետ ունի գերմանական կառավարությունը օսմանյան Թուրքիայում կատարված ցեղասպանության հարցում։ Միայն ձախակողմյան խմբակցությունն է, որ անցած տարիների ընթացքում խորհրդարանում կառավարությանը դիմած բազմաթիվ հարցումների միջոցով փորձել է առաջ քաշել այս թեման (ըստ խորհրդարանի տեղեկագրերի 16/4750,16/9956, 17/687, 17/1798)։ Պատասխաններից ակնհայտ է դառնում, որ գերմանական կառավարության դիրքորոշումը մեծավ մասամբ համապատասխանում է թուրքական կառավարության դիրքորոշմանը։ Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ տեղի ունեցած հանցագործությունը առայժմ գերմանական ոչ մի կառավարության կողմից չի ճանաչվել որպես ցեղասպանություն։ Գերմանական ձեռնարկությունների կազմակերպած Բաղդադի երկաթուղու կառուցմանը մասնակից տասնյակ հազարավոր հայերին գերմանական կառավարությունը անվանում է «կարծեցյալ հարկադիր աշխատողներ»։ Գերմանական կառավարության կարծիքով կոտորածներն ու տեղահանությունները չեն կարող ըստ ՄԱԿ-ի համաժողովի, որը Գերմանիայում 1955 թ. փետրվարին է ուժի մեջ մտել, ճանաչվել ցեղասպանություն, քանի որ դրանք հետադարձ վավերական ուժ չունեն։ Միգուցե գերմանական կառավարությունը նաեւ այն տեսակետին է, որ Եվրոպայի հրեաների դեմ տեղի ունեցած հանցագործությունը եւս այդ պարտագրի կողմից որպես ցեղասպանություն չի կարող ճանաչվել, քանի որ ցեղասպանության իրագործման փաստը մի քանի տարի հետո է նորմավորվել։ Խաղաղության Նոբելյան մրցանակակիր Էլի Վիզելը, որը Շոայի վերապրողներից է, երիտթուրքական կառավարության կատարած հանցագործությունները անվանել է 20-րդ դարի առաջին ցեղասպանություն։ 2000 թ. հունվարի 27-ի խորհրդարանական իր ելույթում նա ասում է. «Նա, ով փորձում է զոհերի հիշատակը մթագնել, սպանում է երկրորդ անգամ»։ Գերմանիայի կառավարությունը, որն ընդունում է թուրքական կառավարության դիրքորոշումը եւ անտեսում է եվրոպական, ինչպես նաեւ այլ խորհրդարանների որոշումները, այն տեսակետին է, որ պատմաբանների հանձնաժողովը պետք է պարզի այն, ինչը գիտնականների ճնշող մեծամասնության համար վաղուց պարզ է։ Բաղդադի երկաթուղու շինարարության պարագայում էլ խոսում է «կարծեցյալ հարկադրական աշխատանքից», հետեւաբար նա սպանում է երկրորդ անգամ։ Նման դիրքորոշումը միաժամանակ առաջացնում է արհամարհանք հիշողության մշակույթի գաղափարների հանդեպ։ Գերմանական կառավարության նման դիրքորոշումը հավասարաչափ անվայել է կայսերական կառավարության դիրքորորոշմանը։ Գերմանական Սոցիալիստների եւ Կանաչների խմբակցությունները դեռեւս ոչ մի քննադատական տեսակետ չեն ցուցաբերել կառավարության հանդեպ։ Հայոց ցեղասպանության հարցում կարմիր- կանաչ կառավարությունը նույն դիրքորոշումն ուներ, ինչ որ ներկայիս կոալիցիոն կառավարությունը։ Այսպիսով կարծիք է առաջանում, որ հունիսյան որոշմամբ գերմանական խորհրդարանը լոկ փորձեց քաղաքական այս սուր թեման այնպես փակել, որ Թուրքիայի հետ եղած ներքին նեղ ավանդական կապերը չվնասվեն։ Հարց է ծագում նաեւ պատգամավորների պարկեշտության վերաբերյալ, որոնք այսօր լռում են, մինչ հինգ տարի առաջ հայերի նկատմամբ կատարված հանցագործությունը որպես ցեղասպանություն էին դատապարտում, ինչպես նաեւ խոսում էին այն մասին, որ գերմանական կողմը պետք է պատասխանատվություն կրի եւ ներողություն խնդրի հայ ժողովրդից։ Մենք՝ ստորագրող միությունները, կառավարությանն ենք հայտնում մեր բողոքը, որը հակառակ անկախ մասնագետների ծանրակշիռ մեծամասնության համոզվածության, այն կարծիքին է, որ դեռ պետք է ճշտվի, թե օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած հանցագործությունը ցեղասպանությո՞ւն է, թե՞ ոչ։ Այնինչ Գերմանիայի կառավարությունը՝

- Հերքում է, որ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ցեղասպանությունը համապատասխանում է ՄԱԿ-ի Ցեղասպանության 1948 թ. կոնվենցիային,
- ոչ մի տեսակի միջոցներ չի ձեռնարկում, որպեսզի Թուրքիայի հասարակությունը, կառավարությունը եւ խորհրդարանը պատմության մեջ եւ ներկայումս հայերի նկատմամբ իր դերի համար դիրքորոշում ունենա,
- հերքում է, որ գերմանական ձեռնարկությունները հայերին որպես հարկադիր աշխատող են վերցրել,
- հրաժարվում է պատմական եւ քաղաքական պատասխանատվությունից,
- թուրքական կառավարության կարծիքն է ընդունում եւ նրա՝ աշխարհով մեկ դատապարտված հերքողական քաղաքականությանն է աջակցում։

**ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ**
**Գերմանիայի բաժանմունք**
**Քյոլն, 10.06.2010**
**(բաժանմունքի նախագահ՝ դոկտոր Րաֆֆի Պետիկյան, էլեկտրոնային հասցե...bedikian2001@yahoo.de)**

# Մոսկվայի եւ Պետերբուրգի հայկական գաղութների պատմությունը

## *Նոր ուսումնասիրություն*

Բազմավաստակ պատմաբան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Վլադիմիր Բարխուդարյանը** տասնամյակներ շարունակ բեղուն եւ արդյունավետ աշխատանք է կատարում հայկական գաղթավայրերի պատմության ուսումնասիրության ասպարեզում։

Նրա վերջին աշխատությունը՝ **«Մոսկվայի եւ Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (18-րդ դ. կես-20-րդ դ. սկիզբ)»** խորագրով, օրերս դրվեց հայ ընթերցող հասարակայնության գրասեղանին։

Այն հրատարակվել է ՀՀ ԳԱԱ գրահրատարակչական խորհրդի եւ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ։

Առաջաբանում վաստակավոր պատմաբանը նշում է այն ընդհանրություններն ու առանձնահատկությունները, որոնք բնորոշ ու տիպական են եղել հայկական գաղութների կազմավորման ժամանակներից ի վեր։ Վերոնշյալ օրինաչափություններից առաջինը շեշտվում է այն հանգամանքը, որ օտար ափերում հայտնված հայ զանգվածները իրենց բոլոր ունակությունները գործադրել են, որ ամենից առաջ սեփական գոյատեւումն ապահովեն։ Եվ հենց դրանով իսկ նրանք նաեւ ծառայել են տվյալ երկրի եւ ժողովրդի շահերին։

Իրենց նոր հայրենիքներին գաղթավայրերի հայության ծառայությունը լոկ տնտեսական գործունեությամբ չի սահմանափակվել։ Նրանք իրենց ներդրումն են ունեցել նաեւ հասարակական-քաղաքական կյանքում։

Գաղութահայությունը հարկավոր պահին նաեւ զենքը ձեռքին կանգնել է իրեն ապաստան տված ժողովրդի կողքին եւ նրա հետ ուսուսի պայքարել թշնամիների դեմ։ Վկա՝ 1683 թվականին Վիեննայի բախտորոշ ճակատամարտը, որտեղ Յան Սոբեսկու գլխավորած լեհական բանակի շարքերում կռվում էին հազարավոր հայորդիներ։

Վլ. Բարխուդարյանը համոզիչ ոճով փաստարկում է, որ հյուրընկալ երկրի մի մասնիկը լինելու եւ ըստ ամենայնի նրա շահերին ծառայելու հետ մեկտեղ հայկական գաղութները բազմաթիվ թելերով կապված են եղել նաեւ մայր հայրենիքի հետ։

Գաղթավայրերի հայ զանգվածները թեեւ ապրում եւ գործում էին տարբեր երկրներում, սակայն միաժամանակ մշտապես իրենց մեջ կրում էին հայոց հայրենիքի գաղափարը, պահպանում եւ զարգացնում մայր ժողովրդի ավանդույթներն ու մշակույթը։ Դա հայ գաղթավայրերի պատմության բնորոշ կողմն է, գլխավոր առանձնահատկությունը։

Ակադեմիկոս պատմաբանը սույն մենագրությամբ միաժամանակ կարեւորում է այն հանգամանքը, որ գաղթավայրերում տեղի են ունեցել տարբեր ժողովուրդների սովորույթների, վարքուբարքի ու մշակույթների փոխազդեցություն եւ փոխհարստացում։ Եվ այդ առումով էլ գաղութների գոյությունը սոսկ հայկական առանձին զանգվածների պատմություն չէ, այլ հայ ժողովրդի՝ օտար ժողովուրդների հետ սերտ շփումների ու պատմական աղերսների տարեգրություն։

Ակադեմիկոսի սույն աշխատությամբ հայ պատմագրության մեջ առաջին անգամ ներկայացված է հայկական գաղութների կազմավորման եւ ծավալած գործունեության պատմությունը Ռուսաստանի զույգ մայրաքաղաքներում՝ Մոսկվայում եւ Պետերբուրգում, իր ամբողջական ընթացքով։

Աշխատության էջերում քննվում են բոլոր այն կարեւոր հիմնահարցերը, որոնք էական նշանակություն են ունեցել հայ համայնքների եւ նրանց շաղկապող մայր երկրի ճակատագրում։ Ըստ այդմ, վեր են հանվում այն մտահոգությունները, տագնապներն ու շահագրգռությունները, որոնք առկա են եղել հայ համայնքների առօրյա կյանքում եւ գործունեության ընթացքում։

Առաջին հերթին դա վերաբերում է պատմական հայրենիքի ճակատագրին եւ մայր-ժողովրդի ազատագրության խնդիրներին։ Հենց Ռուսաստանի մայրաքաղաքների նպաստավոր միջավայրում ծնունդ առան Հայաստանի ազատագրության երկու կարեւոր ծրագրերը (Մ. Սարաֆյանի եւ Հ. Արղությանի), ինչպես նաեւ ցարական Ռուսաստանի կազմում Արեւելյան Հայաստանին լայն ինքնավարություն տալու Խ. Լազարյանի նախագիծը։

Աշխատության առաջին գլուխը վերաբերում է Մոսկվայում եւ Պետերբուրգում հայկական գաղութների առաջացմանը՝ սկսած հայերի այնտեղ հայտնվելու ամենավաղ տեղեկություններից, այնուհետեւ փաստերով ու թվերով գծագրվում է երկու մայրաքաղաքներում հայկական համայնքների՝ պատմականորեն ձեւավորման գործընթացը։

Երկրորդ գլուխը վերաբերում է վերոնշյալ հայկական համայնքների ներքին կյանքին, որը ներառում է եկեղեցական խորհուրդների կանոնադրությունն ու կառուցվածքը, վերջիններիս գործունեության լայն սպեկտրը, եկամուտների ու ծախսերի դինամիկան, հայ բնակչության ժողովրդագրական տեղաշարժերի առանձնահատկությունները։ Երրորդ գլուխն ընդգրկում է հայ համայնքների հասարակական-քաղաքական եւ սոցիալական կյանքի շառավիղը՝ իր ողջ բազմազանությամբ, հայ-ռուսական հասարակական կապերի լայնընդգրկուն շարադրումով։ Չորրորդ գլխում ներկայացված են Մոսկվայի եւ Պետերբուրգի հայ համայնքների մշակութային կյանքը, կրթական ու գիտական ոլորտը, գրականությունն ու մամուլը։

Անփոփելով՝ նշենք, որ ակադեմիկոս Վլ. Բարխուդարյանի սույն աշխատությունը իսկական հանրագիտարանային գործ է Ռուսաստանի երկու մայրաքաղաքների հայ համայնքների ձեւավորման, կազմակերպման եւ գործունեության պատմության վերաբերյալ։

Այն եզակի է ոչ միայն իր բնույթով, այլեւ հայրենասիրական ջերմ լիցքերով, հայրենիքը ամեն ինչից վեր դասելու ընդգծված շեշտադրումներով եւ մտայնությամբ։

Ահա թե ինչու վաստակավոր հայ պատմաբանի այս հատորյակը անկասկած ծառայելու է որպես նաեւ հայրենագիտության եւ հայրենասիրության ուղեցույց՝ ներկա եւ գալիք սերունդների համար։

**ԱՐՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
**Պատմական գիտությունների թեկնածու**

AZG NEW PDF.qxd 14/07/2010 21:35 Page 1



# «Հրանտ Դինքի մահվան օրը դարձավ հայ եւ թուրք ժողովուրդների մերձեցման սկզբնաղբյուրը»

***Հայաստանում է թուրքական կինոյի վարպետ Սեմիհ Կապլանօղլուն: «Ազգը»-ը զրուցեց թուրք ռեժիսորի հետ: Նա «Ոսկե ծիրանի» միջազգային խաղարկային ֆիլմերի ժյուրիի անդամներից է: «Ոսկե ծիրանի» շրջանակներում ցուցադրվում է ռեժիսորի «Մեղր» ֆիլմը, որն արժանացել է Բեռլինի կինոփառատոնի «Ոսկե արջին»: «Յուսուֆի եռագրության» 3 ֆիլմերը («Ձու», «Կաթ», «Մեղր») պատմում են գլխավոր հերոսի՝ 6- ամյա մի տղայի պատմությունը:***



**- Հայաստանում առաջին հայացքից ինչպիսի՞ տպավորություններ եք ստացել:**

- Ստամբուլում շատ հայ ընկերներ ունեմ, եւ այն ջերմությունը, որը ստանում եմ նրանցից, տեսա նաեւ Հայաստանում:

**- Ինչքանո՞վ եք ծանոթ հայկական կինոյին, ինչպե՞ս եք գնահատում հայ կինոյի ավանդույթներն ու ներկայիս վիճակը:**

- Ճանաչում եմ միայն Սերգեյ Փարաջանովին, ինչպես նաեւ անձամբ ծանոթ եմ կինոպրոդյուսեր Հայկ Կիրակոսյանի հետ, որն ապրում է Ստամբուլում: Իմ առաջին ֆիլմը միասին ենք նկարահանել: Որոշ հայկական ֆիլմեր էլ պատրաստվում եմ դիտել «Ոսկե ծիրանի» ընթացքում:

**- Հայ եւ թուրք ժողովուրդների մերձեցման գործին ինչքանո՞վ կարող է նպաստել կինոն:**

- Հուսով եմ հայ եւ թուրք ռեժիսորները համատեղ ֆիլմեր կստեղծեն՝ թուրքերը հայերի մասին, հայերը՝ թուրքերի:

**- Ինչքանո՞վ է հնարավոր հայ եւ թուրք ռեժիսորների համագործակցությունը:**

- Այդպիսի համագործակցության օրինակ է հենց հայ-թուրքական կինոպլատֆորմը, որն ընթանում է «Ոսկե ծիրանի» շրջանակներում: Հայ եւ թուրք ռեժիսորները համատեղ ֆիլմեր նկարահանելու պլաններ ունեն: Կարծում եմ՝ Հրանտ Դինքի մահվան օրը դարձավ հայ եւ թուրք ժողովուրդների մերձեցման սկզբնաղբյուրը: Հրանտ Դինքը եղել է իմ մտերիմ ընկերը: Նրա մահվան օրը Ստամբուլում 500 հազար հոգի բողոքի էին դուրս եկել՝ ասելով, թե ինչո՞ւ է սպանվել Հրանտ Դինքը: Վստահ եմ, որ սեպտեմբերի 19-ին կբացվի սահմանը: Այդ օրը Աղթամար կղզում կրոնական միջոցառում է կազմակերպվում: 2000 մարդ բացել են իրենց տան դռները եւ սեպտեմբերի 19-ի կապակցությամբ համաձայն են հյուրընկալելու հայերին:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# Ստեղծագործ երեխաների ինքնադրսեւորման նոր ձեւ

Դիլիջանի բարձրաբերձ լեռների, գեղատեսիլ անտառների մեջ է ծվարել Կոմպոզիտորների ստեղծագործական տունը, որն իր դռներն էր բացել հանրապետության բոլոր մարզերից, Արցախից, Ջավախքից ու Երեւանից ընտրված 95 պարուհականների առջեւ: Մեկ շաբաթ «Արտուտիկ» ճամբարում ստեղծագործող շնորհալի երեխաները հնարավորություն ունեցան հրաշալի հանգիստ վայելելու, ըստ մասնագիտական ճյուղերի: Այդ օրերից ստացած տպավորություններն ու գիտելիքները պարուհականները ներկայացրին երեկ ճամբարի փակման հանդիսության ժամանակ: ՀՀ մշակույթի փոխնախարար **Արթուր Պողոսյանը «Ազգի»** հետ զրույցում նշեց, որ նման միջոցառում կազմակերպելու նպատակն է «հանրապետության մարզերում մշակույթի ոլորտում ստեղծագործող երեխաներին ամառային ճամբարներում ապահովել ընտրած ճյուղի մասնագիտացումը, փորձել խրախուսել այդ երեխաներին ինքնադրսեւորման հարցում, նաեւ՝ թարմացնել մեր կադրային բանկը՝ հետագայում ապահովելու



նրանց ստեղծագործական զարգացումը, նրանց ընդգրկելով միջազգային մրցույթների ցանկում»:

**«Ազգի»** հետ զրույցում 8-14 տարեկան նկարչուհիները, որոնք մեկ շաբաթ շփվելով գեղանկարիչ Ստեփան Մինասյանի հետ՝ Ճամբարակից Անին, Գյումրիից՝ Սյուզին, Արշալույսից՝ Անահիտը, Սպիտակից՝ Սուսաննան, որոշել են նկարիչ դառնալու երազանքը իրականացնել ու իրենց աշխատանքներում արտացոլել էին բոլոր այն տպավորությունները, որ ստացել են ՀՀ մշակույթի նախարարության չորրորդ տարին անընդմեջ կազմակերպված ամառային հանգստի ընթացքում:

Ուրախ երգն ու նվագը տարածվում էին սարերն անդին ու արձագանքում՝ կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք: Պրն Պողոսյանը ողջունեց երեխաներին ու բարեմաղթանքներ հղեց, իսկ մանկավարժներին հատուկ շնորհակալություն հայտնեց՝ երեխաների մեջ հայոց բնության գեղեցիկը, երաժշտական գաղտնիքները խորությամբ սերմանելու համար: Արձակագիր **Էդվարդ Միլիտոնյանը** ջերմ խոսքեր հղելուց զատ նրանց նվիրեց իր «Արքայադուստր Թարսինեն» գիրքը: Կոմպոզիտոր **Արիկ Սաթյանը** ողջույնի իր խոսքում բարձր գնահատեց երեխաների կատարողական արվեստն ու հպարտորեն նշեց. «Դուք եք մեր ապագան, մենք ձեզ վստահում ենք լիուլի...»:



Հրաժեշտի պահը խարույկի շուրջը հուզիչ էր, քանզի դժվար էր նոր ընկերներին հրաժեշտ տալը: Սակայն շատ շուտով նրանք կրկին կհամախմբվեն մեկ այլ ճամբարում:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**
**Դիլիջան**

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# Հայկական մանկապատանեկան պարբերական մամուլի նոր անդամը՝ «Փթիթ»

**Մայիսին Բեյրութում լույս է տեսել մանկապատանեկան «Փթիթ» պարբերաթերթի առաջին՝ զրոյական համարը: Ա-4 չափսի 32 էջ ծավալով (ներառյալ չորս շապիկները) ամսագրի բովանդակած նյութերի ուղղվածությունը կարելի է ամփոփել առաջին շապիկի վրա տպված «Կարդա՛, Լուծէ՛, Խաղա՛, Ներկէ՛» բառերով:**




**Գունավոր եւ գեղատիպ այս հրատարակության մտահղացումն ու համակարգչային իրագործումը պատկանում են Վերժին Աբրահամյանին: Կողքի ձեւավորումը պարզ, բայց գեղեցիկ եւ ակնահաճո ոճով իրականացրել է Սմբատ Ղազեյանը, իսկ էջադրումն ու համակարգչային ձեւավորումը կատարել է Անի Մսըրյանը:**

**Համարի երկրորդ շապիկին տպված եւ «սիրելի փոքրիկներին» ուղղված խմբագրականը հայտնում է.**

**«Այս պարբերաթերթը կը նպատակադրէ ձեզի հաճելի ժամանց պարգեւել եւ միաժամանակ նպաստել ձեր հայերէն լեզուի եւ տրամաբանութեան բարելաւման:**

**Պարբերաթերթին բովանդակութիւնը 3 բնոյթի է՝ հեքիաթներ, թուաբանական խաղեր եւ հայերէն լեզուի խաղեր:**

**Թէ ինչո՞ւ «Փթիթ» անուանումը: Կը փափաքինք նշել, թէ փթիթ զուտ հայկական բառ մըն է եւ կը նշանակէ ծաղկում: Նկատի ունենալով թէ այս պարբերաթերթին գաղափարը կեանք առած կամ ծաղկած է հայ փոքրիկներուն հաճելի եւ ուսանելի ժամանց պարգեւելու փափաքէն, առանց շահադիտական նպատակ հետապնդելու, յարմար նկատեցինք որդեգրել փթիթ անունը...»:**

**Չափազանց հարուստ եւ բազմաբնույթ են պարբերականի նյութերը, որոնցում ներդաշնակ միասնություն են կազմել հայկականն ու համամարդկայինը՝ հաշվի առնելով նաեւ հայ երեխայի ու պատանեկության հոգեբանությունը: Պարբերականում նշույլ իսկ չկա համաշխարհայնացում կոչվող ապազգային երեւույթից, որ հայկական մանկապատանեկան մամուլը պարզապես խեղդել ու խեղդում է՝ «ժամանակի հետ քայլ պահելու» սին եւ անհիմն պատճառաբանությամբ: Հմուտ կերպով կազմված խաղերն ու շարադրանքներով, պատկերներով եւ լուսանկարներով ուղեկցվող զանազան առաջադրանքները պարզապես խթանում են հայ նոր սերնդի երեւակայությունը: Դրանք միաժամանակ լուծում են թե՛ նոր սերնդի օգտակար ժամանցի, թե՛ նրան անհրաժեշտ գիտելիք փոխանցելու եւ թե՛ ազգային ու համամարդկային արժեքներով դաստիարակելու հույժ կարեւոր խնդիրները: Այս տեսակետից հատկապես հիշարժան են «Իւրաքանչիւր երկիր միացո՛ւր իր դրօշակին» եւ «Միացո՛ւր իւրաքանչիւր բառ իր համապատասխան նկարին» լեզվա-իմացական խաղերը:**

**Մեր միակ քննադատությունն ուղղված է պարբերականի ... հրատարակչական եւ կապի տվյալների ժլատության: «Անձնագրային» միակ տվյալը էլեկտրոնային փոստի հասցեն է՝ vega@gmail.com: Պարբերականի որեւէ էջում չենք գտնի ոչ տարեթիվ ու ամսանուն, ոչ նույնիսկ հրատարակության վայրի մասին հեռավոր ակնարկություն: Տվյալների նման պակասը շատ է բարդացնում հայ պարբերական մամուլի այսօրվա եւ վաղվա մասնագետների եւ ուսումնասիրողների աշխատանքը: Ուստի, հրատարակիչներին խորհուրդ ենք տալիս հնարավորինս շատ տեղեկություններ հաղորդել պարբերականի մասին:**

**Բուռումնավետ եւ մշտական փթթում ենք մաղթում հայ պարբերական մամուլի նորածնունդ «Փթիթին»:**

**ԳԵՎՈՐԳ ՅԱՂՃՅԱՆ**

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

# Լինում է եւ այսպես...

**Վերջերս Երեւանում լույս տեսած «Հայրենադարձների բռնաճնշումները ստալինեան ժամանակաշրջանում» գրքի հրատարակչական տվյալների էջում անունս թյուրիմացաբար տպագրվել է իբրեւ գրքի սրբագրիչ, ինչն ինձ ստիպում է հանդես գալ այս պարզաբանումով:**

**Հեղինակն ինձ փոխանցել էր Ա-4 չափսի թղթի շուրջ 200 էջ համակարգչային շարվածք՝ «աչքից անցկացնելու համար»: Ըստ իմ սովորության, մատիտը ձեռքիս, տեղ գտած սխալները սիրահոժար կերպով եւ անշահախնդրորեն սրբագրել էի՝ այդ գործին տրամադրելով ամբողջ երեք օր, նաեւ հեղինակին անսովոր հայտնել որոշ դիտարկումներ՝ միշտ նպատակ ունենալով որակի բարելավումը եւ սխալների հնարավորինս բացառումը (իմ համոզմամբ, որեւէ գիրք տպագրվում է տասնամյակների, հաճախ էլ՝ դարերի համար, հետեւաբար պետք է բծախնդիր լինել): Նկատի ունենալով տարաբնույթ սխալների մեծ թիվը, հեղինակին նաեւ խորհուրդ էի տվել տպագրության հանձնելուց առաջ շարվածքը նորից ինձ ցույց տալ:**

**Հեղինակը ոչ միայն չի կատարել իմ խնդրանքը, այլեւ առանց ինձ իմաց կամ ցույց տալու, ավելացրել է անհամար սխալներով շուրջ 180 էջ (բռնաճնշվածների վկայություններ, արդարացման խնդրագրեր եւն.), նաեւ անունս տպել իբրեւ գրքի սրբագրիչ՝ առանց այդ մասին ինձ հայտնելու, նույնիսկ առանց նախապես ակնարկած լինելու իր այդ մտադրության մասին (այդ բոլորը հայտնաբերեցի գրքի շնորհանդեսից օրեր անց՝ մի քանի բարեկամների հեգնական-քննադատական խոսքերից հետո գիրքը բացելով եւ... զարհուրելով երեւույթին ի տես): Այսպիսով ես, որ հանրածանոթ եմ իմ խստապահանջությամբ եւ խմբագիրների ու սրբագրիչների՝ նման անպատասխանատու պահվածքի հանդեպ իմ անհանդուրժողական վերաբերմունքով, ակամայից եւ խոր ցավով հայտնվել եմ ծայր աստիճան անհարմար վիճակում՝ ինքս ինձ այպանելով մարդկային վեհ առաքելություն հետապնդող այս հրատարակությանն իմ մասնակցության համար:**

**Հետեւաբար ընթերցողներից խնդրում եմ իբրեւ սրբագրիչի անունս չեղյալ համարել հիշյալ գրքի վերջին էջում՝ սխալների ամբողջական պատասխանատվությունը թողնելով հեղինակին:**

**ԳԵՎՈՐԳ ՅԱՂՃՅԱՆ**

# Կհաղթահարվի՞ մակեդոնական արգելապատնէշը

Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի որակավորման 2-րդ փուլի առաջին խաղում այսօր «Միկան» Սկոպիեյում կմրցի մակեդոնական «Ռաբոտնիչկիի» հետ: Վերջինս պայքարը սկսել էր առաջին փուլից՝ խոշոր հաշիվներով հաղթելով Անդորրայի «Լուսիտանսին» (5-0, 6-0): «Ռաբոտնիչկին» Մակեդոնիայի առաջնությունում զբաղեցրել է 2-րդ տեղը՝ 26 հանդիպումներում վաստակելով 50 միավոր:

Սկոպիեյի «Գրադսկի» մարզադաշտում հանդիպումը կսկսվի Երեւանի ժամանակով 20-ին: Խաղը կսպասարկի հունգարացի մրցավար Թոմաշ Բոգնարը: «Միկայի» 60 հոգանոց պատվիրակությունը երեկ առավոտյան Երեւան-Սալոնիկի-Սկոպիե ուղիղ չվերթով մեկնել է մրցավայր:

Նշենք, որ «Լուսիտանսի» հետ «Ռաբոտնիչկիի» առաջին հանդիպմանը ներկա է գտնվել «Միկայի» գլխավոր մարզիչ Արմեն Ադամյանը: «Ռաբոտնիչկին» ուժեղ թիմի տպավորություն է թողել Ադամյանի վրա: Ըստ նրա, թիմն ունի բրազիլացիներից կազմված հարձակողական հզոր եռյակ, իսկ պաշտպանությունում հուսալի խաղով առանձնանում էր «Ռաբոտնիչկիի» ավագը: Խաղային օղակների միջեւ էլ համագործակցությունը սերտ էր: Այնուամենայնիվ, Արմեն Ադամյանը գտնում է, որ մրցակիցը նաեւ խոցելի տեղեր ունի եւ կարելի է հաղթահարել մակեդոնական արգելքը:

Եվրոգավաթների մրցաշարի շեմին «Միկայի» կազմը համալրել է թիմի նախկին հարձակվող, 35-ամյա Արամ Ոսկանյանը: Նա մրցաշրջանի մեկնարկից առաջ տեղափոխվել էր Տաշքենդի «Լոկոմոտիվ»: Արամն այժմ լավ մարզավիճակում է եւ, անկասկած, օգտակար կլինի հարազատ կոլեկտիվին:

«Միկայի» համար եվրոգավաթների հերթական խաղարկությունը 9-րդն է: Առայժմ միկացիներին միայն մեկ անգամ է հաջողվել հաղթահարել առաջին փուլը: Դա 2007-ին էր: Արկադի Անդրեասյանի գլխավորությամբ «Միկան» հաղթահարեց հունգարական ՄՏԿ-ի արգելքը: Յյուրընկալվելիս «Միկան» պարտվեց 1-2 հաշվով, իսկ սեփական հարկի տակ Արտյոմ Ադամյանի խփած միակ գոլի շնորհիվ հաղթեց եւ հաջորդ փուլի ուղեգիր նվաճեց: «Միկան» իրական հնարավորություն ուներ հաղթահարելու նաեւ 2-րդ փուլի արգելքը, սակայն ձեռքից բաց թողեց ուղեգիրը: Սլովակիայի «Արտմեդիայի» հետ սեփական հարկի տակ անցկացրած խաղում «Միկան» մեծ առավելություն ուներ, սակայն միայն 2-1 հաշվով հաղթեց: Իսկ հյուրընկալվելիս զիջեց 0-2 հաշվով ու դուրս մնաց հետագա պայքարից:

Վերջին 2 տարիներին եւս «Միկան» ցավալի «սայթաքումներ» է ունեցել: 2008-ին Ինստերտոնոյի գավաթի խաղարկությունում «Միկան» սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթում էր մոլդովական «Տիրասպոլին», սակայն ընդմիջումից հետո 2 գոլ բաց թողեց ու խաղն ավարտեց ոչ-ոքի: Պատասխան խաղում դարպասները մնացին անառիկ: «Տիրասպոլը» շնորհիվ մրցակցի դաշտում խփած 2 գոլերի, մտավ հաջորդ փուլ:

Անցյալ տարի էլ պատմությունը կրկնվեց: Շվեդական «Յելսինգբորգի» հետ արտագնա խաղում հաշիվը 1-1 էր, սակայն խաղավերջում «Միկան» 2 գոլ բաց թողեց ու ցավալի պարտություն կրեց: Երեւանում էլ զգալի առավելություն ունենալով մրցակցի նկատմամբ, «Միկան» բավարարվեց ոչ-ոքի արդյունքով (1-1):

Որպես կանոն, «Միկան» ավելի հաջող է հանդես եկել եվրոգավաթների պատասխան հանդիպումներում, իսկ առաջին խաղերում պարտվել է, բացառությամբ 2008-ին «Տիրասպոլի» հետ խաղի (2-2): Այսօրվա խաղը եվրոգավաթներում «Միկայի» 20-րդ հանդիպումն է: Թիմը տոնել է ընդամենը 3 հաղթանակ, 5 խաղ ավարտել է ոչ-ոքի, կրել է 11 պարտություն: Գնդակների տարբերությունն է 13-34:



Ռիելթոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<ԱԴԱՄԱՆԴ>> ԵԱՅԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է <<ԱՌԵԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ>> ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

-Բնակարան 61.6 ք.մ. (ինքնակամ շինություն 6.9 ք.մ.): Յասցե՝ ք. Երեւան, Շենգավիթ համայնք, Չեխովի փող., շենք 17, բն. 1ա: Մեկնարկային գինը՝ 17900000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 16.08.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

## Լուծարվում է

Յայկական առողջապահական միություն հասարակական կազմակերպությունը՝ գրանցված ՅՅ արդարադատության նախարարի թիվ 948 հրամանով 15.06.1999 թ., վկայական N 1157:

Պարտատերերը երկամսյա ժամկետում դիմեն ք. Երեւան, Մ. Յերացու 16, բն. 18, հեռ. 57-60-73:

*Ենթահավելված 7*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՅԱՇՎԱՊԱՅԱԿԱՆ ՅԱՇՎԵԿՇԻՌ**
**«30» հունիսի 2010թ.**
**«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ**
ք.Երեւան,Կալենցի 11
(վարկային կազմակերպության անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| | Անվանումը | Յաշվետու ժամանակաշրջան | Նախորդ տարվա վերջ |
|---|---|---|---|
| 1 | Ակտիվներ | | |
| 1.1 | Դրամական միջոցներ եւ բանկային հաշիվներ | 178,351 | |
| 1.2 | Առեւտրային նպատակով պահվող ֆինանսական ներդրումներ | | |
| 1.3 | Բանկերում տեղաբաշխված միջոցներ | | |
| 1.4 | Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ | | |
| 1.5 | Յաճախորդներին տրված վարկեր եւ այլ փոխատվություններ | | |
| 1.6 | Վաճառքի համար նախատեսված ներդրումներ | | |
| 1.7 | Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ | | |
| 1.8 | Մինչեւ մարման ժամկետը պահվող ներդրումներ | | |
| 1.9 | Վարձակալության գծով ստացվելիք գումարներ | | |
| 1.10 | Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում | | |
| 1.11 | Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում եւ ոչ նյութական ակտիվներում | | |
| 1.12 | Յիմնական միջոցներ եւ ոչ նյութական ակտիվներ | 277 | |
| 1.13 | Յետաձգված հարկային ակտիվներ | | |
| 1.14 | Ստացվելիք տոկոսներ | | |
| 1.15 | Այլ ակտիվներ | | |
| | Ընդամենը՝ ակտիվներ | 178,628 | - |
| 2 | Պարտավորություններ | | |
| 2.1 | Բանկերից ստացված փոխառություններ եւ վարկեր | | |
| 2.2 | Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ | | |
| 2.3 | Յաճախորդներից ներգրավված փոխառություններ | | |
| 2.4 | Պարտավորություններ ՅՅ կառավարության նկատմամբ | | |
| 2.5 | Վարձակալության գծով վճարվելիք գումարներ | | |
| 2.6 | Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր | | |
| 2.7 | Պահուստներ | | |
| 2.8 | Վճարվելիք գումարներ | | |
| 2.9 | Յետաձգված հարկային պարտավորություններ | | |
| 2.10 | Վճարվելիք տոկոսներ | | |
| 2.11 | Այլ պարտավորություններ | | |
| | Ընդամենը՝ պարտավորություններ | - | - |
| 3 | Կապիտալ | | |
| 3.1 | Կանոնադրական կապիտալ | 180,000 | |
| 3.2 | Պահուստներ | | |
| 3.2.1 | Գլխավոր պահուստ | | |
| 3.2.2 | Վերագնահատման պահուստներ | | |
| 3.3 | Կուտակված շահույթ | (1,372) | |
| | Ընդամենը՝ կապիտալ | 178,628 | - |
| | Ընդամենը՝ պարտավորություններ եւ կապիտալ | 178,628 | - |

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն Գ. Վարդանյան
Գլխավոր հաշվապահ Ա. Սահակյան

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՅԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Ֆինանսական արդյունքների մասին**
**«30» հունիսի 2010թ.**
«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
ք.Երեւան,Կալենցի 11
(վարկային կազմակերպության անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| Անվանումը | Յաշվետու ժամանակաշրջան | Նախորդ տարվա նույն ժամանակաշրջան | Յաշվետու տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվը | Նախորդ տարվա սկզբից մինչեւ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանը |
|---|---|---|---|---|
| Տոկոսային եւ նմանատիպ եկամուտներ | 430 | | 430 | |
| Տոկոսային եւ նմանատիպ ծախսեր | | | | |
| Զուտ տոկոսային եկամուտ | 430 | - | 430 | - |
| Շահաբաժնի տեսքով եկամուտներ | | | | |
| Կոմիսիոն եւ այլ վճարների տեսքով եկամուտներ | | | | |
| Կոմիսիոն եւ այլ վճարների տեսքով ծախսեր | | | | |
| Առեւտրային նպատակով պահվող ներդրումների զուտ շահույթ (վնաս) | | | | |
| Վաճառքի համար նախատեսված ներդրումներից զուտ շահույթ (վնաս) | | | | |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող ներդրումներից զուտ շահույթ (վնաս) | | | | |
| Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ (վնաս) | | | | |
| Այլ գործառնական եկամուտ | | | | |
| Գործառնական եկամուտ | - | - | - | - |
| Վարկերից եւ այլ փոխատվություններից առաջացած կորուստներ | (1,802) | | (1,802) | |
| Ընդհանուր վարչական ծախսեր | | | | |
| Այլ գործառնական ծախսեր | | | | |
| Շահույթ մինչեւ հարկվելը | (1,372) | - | (1,372) | - |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | | | | |
| Շահույթ հարկումից հետո | (1,372) | - | (1,372) | - |
| Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ | | | | |
| Մեկ բաժնետոմսին ընկնող նոսրացված շահույթ | | | | |

Աշխատակիցների միջին թվաքանակը 2010թ. երկրորդ եռամսյակի ընթացքում կազմել է 2, այդ թվում՝ ստասարկող անձնակազմը՝ 0

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն Գ. Վարդանյան
Գլխավոր հաշվապահ Ա. Սահակյան

*Ենթահավելված 9*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՅԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ**
**«30» հունիսի 2010թ.**
«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
ք.Երեւան,Կալենցի 11
(վարկային կազմակերպության անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| Անվանումը | Ընթացիկ տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվը | Նախորդ տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվը |
|---|---|---|
| 1. Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից | 430 | - |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչեւ գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխությունը | 430 | - |
| Ստացված տոկոսներ | 430 | |
| Վճարված տոկոսներ | | |
| Կորուստների վերականգնում | | |
| Ստացված շահաբաժիններ | | |
| Ստացված զուտ կոմիսիոն գումարներ | | |
| Վճարված աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումներ | | |
| Վճարված հարկեր | | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխություններից | - | - |
| Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում) | | |
| Ներգրավված վարկերի ավելացում (նվազում) | | |
| Առեւտրային նպատակով պահվող եւ վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում) | | |
| Ֆինանսական վարձակալության դիմաց ստացվելիք գումարների նվազում (ավելացում) | | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից | | |
| 2. Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից | (277) | - |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող արժեթղթերի նվազում (ավելացում) | | |
| Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում) | | |
| Յիմնական միջոցներում եւ ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում) | | |
| Յիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (277) | |
| Յիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների օտարում | | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից | | |
| 3. Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից | 180,000 | - |
| Վճարված շահաբաժիններ | | |
| Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում) | | |
| Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում) | | |
| Վարկային կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում) | | |
| Բաժնետերերի ներդրումները կանոնադրական հիմնադրամում | 180,000 | |
| Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում) | | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից | | |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների եւ դրանց համարժեքների վրա | | |
| Դրամական միջոցների զուտ հոսք | 180,153 | - |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | - | - |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում | 180,153 | - |

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն Գ. Վարդանյան
Գլխավոր հաշվապահ Ա. Սահակյան

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՅԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին**
**«30» հունիսի 2010թ.**
«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
ք.Երեւան,Կալենցի 11
(վարկային կազմակերպության անվանումը եւ գտնվելու վայրը)
**Նախորդ տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվը**

*(հազար դրամ)*

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը | Կանոնադրական կապիտալ | Գլխավոր պահուստ | Վերագնահատման պահուստ | Կուտակված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| Յոդվածներ | | | | | |
| Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008թ. | | | | | - |
| Յաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը եւ էական սխալների ճշգրտումը | | | | | |
| Վերահաշվարկված մնացորդը | | | | | |
| Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ եւ վնասներ | | | | | |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում | | | | | - |
| Շահաբաժիններ | | | | | |
| Զուտ շահույթ (վնաս) | | | | | - |
| Մնացորդ առ 30 հունիսի 2009թ. | - | - | - | - | - |

**Յաշվետու տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվը**

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը | Կանոնադրական կապիտալ | Գլխավոր պահուստ | Վերագնահատման պահուստ | Կուտակված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| Յոդվածներ | | | | | |
| Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2009թ. | - | | | | - |
| Յաշվապահական հաշվառման քաղաքա-կանության փոփոխությունների ընդհանուր արդյունքը եւ էական սխալների ճշգրտումը | | | | | - |
| Վերահաաշվարկված մնացորդը | | | | | - |
| Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ եւ վնասներ | | | | | - |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում | 180,000 | | | | 180,000 |
| Շահաբաժիններ | | | | | - |
| Զուտ շահույթ (վնաս) | | | | (1,372) | (1,372) |
| Մնացորդ առ 30 հունիսի 2010թ. | 180,000 | - | - | (1,372) | 178,628 |

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն Գ. Վարդանյան
Գլխավոր հաշվապահ Ա. Սահակյան

*Ձեւ թիվ 30*

**ՅՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՅԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Յիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ**
**Վարկային կազմակերպության անվանումը «Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ**
**Ամսաթիվը 01/04/10-ից 30/06/10**

*(հազար դրամ)*

| Նորմատիվներ | Փաստացի մեծությունը | Յայաստանի Յանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը | Յաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|---|---|---|---|
| Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը | 178,299 | 150,000 | - |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը | 178,299 | 150,000 | - |

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊ ընկերությունը իր կանոնադրության համաձայն հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություններ չի ներգրավում, հետեւաբար մնացած հիմնական տնտեսական նորմատիվները «Կամուրջ» ՈւՎԿ ՍՊԸ վրա չեն տարածվում:

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն Գ. Վարդանյան
Գլխավոր հաշվապահ Ա. Սահակյան

¶ам²¼,Ж Р²Ш²р ¼²Ь¶²Р²р°Иª 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Յանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 14.07.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: